

# ՄԱՅԿ

Հարկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի  
Тифлис. Редакция „Маяк“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են  
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ահա ինչ պէտք է անել:—Ներքին տե-  
սու թիւն: Նամակ Գանձակից: Նամակ Ա-  
խալքաբաղից: Նամակ Խմբագրի: Ներքին լու-  
րեր:—Արտաքին տեսու թիւն: Աւարտի-  
—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւն-  
ներ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Փոք-  
րիկ ծանապարհորդութիւն:

## ԱՀԱՒԵՁ ՊԵՏԻ ԱՆՆԵԼ

Մեր լրագրի № 62 առաջնոր-  
դող յօդուածը թիւրքաց հայերի  
ուսումնարանների մասին, յարուցեց  
ոմանց կողմից հետեւեալ դատո-  
ղութիւններ: «Ինչպէս կարող են  
հայերը գրաւել դէպի իրանց ու-  
սումնարանները քիւրդերին և  
թիւրքերին, երբ ոյժը մահմետա-  
կան տարրի կողմն է. այդ տեսակ  
յանդուգն գործի համար հայերի  
կեանքը կարող է վտանգի մէջ  
լինել»:

Ի հարկէ առանց իր կեանքը  
վտանգի մէջ դնելու ոչ մի յեղա-  
փոխութիւն գործել չէ կարելի:  
Բայց ինչի եւրօպացի և ամերի-  
կացի միսիոնարները կարողանում  
են ազդել մահմետականների վրա,  
իսկ հայերը չեն կարող: Մենք

չենք պահանջում որ հայերը բա-  
րոզեն մահմետականների մէջ լու-  
սաւորչական կրօնը, այլ պահան-  
ջում ենք որ իրանց դպրոցներում  
ուսում մատակարարեն մահմետա-  
կան զաւակներին, որոնք մնում են  
տղիտութեան, անշարժութեան,  
բարբարոսութեան մէջ:

Ի հարկէ այդ տեսակ գործ  
կարող է մեծ արգելքների հան-  
դիպել և նրան կատարելապէս  
աշողացնելու համար հարկաւոր է  
թիւրքաց հայերին գլխաւորապէս  
երկու բաների վրա հոգալ. մինը՝  
իրաւունք ստանալ Հայաստանի  
մէջ իրանց սեփական պահպան-  
գործ ունենալու, որպէս զի խաղաղ  
և աշխատասէր հայը պաշտպան-  
ված լինի բարբարոսների կամա-  
յականութեան դէմ՝ երկրորդ՝  
բարձրացնել Հայաստանի բարո-  
յական նշանակութիւնը, տեղա-  
փոխելով Կ Պօլսի հայոց ազգա-  
յին ժողովը դէպի Հայաստանի  
մի որ և է կենտրոն, օրինակ դէ-  
պի Լըզուրում:

Այն ժամանակ թիւրքաց Հա-  
յաստանը կը ստանայ մի ազգա-  
գրական և վարչական ամբողջու-

թիւն, հայը կունենայ բարոյական  
և վարչական ոյժ, կունենայ մի  
իրական կենտրոն, կունենայ դրա-  
կան պաշտպանութիւն:

Դա կը լինի թիւրքաց Հա-  
յաստանի ինքնաւարութեան ըս-  
կիզբը:

Ուսումնարանական պրօպագան-  
դա թիւրքաց Հայաստանի մէջ  
պէտք է ձեռք ձեռքի տուած  
ընթանայ Հայաստանի վարչական  
վերանորոգութեան հետ:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

23 ապրիլ

Վերջին նամակս, որ տպագրվեց «Մշակ»  
46 համարում, այստեղ քիչ ներգործութիւն  
չունեցաւ: Որտեղ պատահում էի, ժողովուրդը  
նոյն համարի մասին էր խօսում: Եւստեղ քննու-  
թեան էին ենթարկում, նոյն իսկ երեցփոխան-  
ներից ոմանք էլ անտարբեր չէին: Գուցարի,  
գուցարի, քիչ հայհայտք չը թափեցին խեղճ  
նամակագրի գլխին, քիչ չը կրճատեցին իրենց  
ատամները, բաւական սպառնալիք կարգային  
պաշտօնը թողնելու վերաբերմամբ, խոստացան  
ժողովուրդին ձիւղ հաշիւ տալ... սպասում ենք  
սպասում, օրին չենք արժանանում:

Դպրոցներին:—Տէր Յովհաննէս հայրը դպրոցի  
շինութեան վերաբերեալ բոլոր կարևոր կար-  
գադրութիւնները վերջացնելուց զինի, թուղթ  
և մատիտը ձեռքին, ժամակուցը առաջը զը-  
ցած, անէ տուն մանգալով, դպրոցի համար  
նուէրներ հաւաքեց և ապա ողջունելով հա-  
սարկութեան, ուղևորվեցաւ դէպի իրանց  
գիւղը:

Գնացած օրից մինչև զատիկ կիրակին  
ներկայ էի լինում ժամասացութեան: Նորա-  
հաս նոթածիքը (վեց ձայնագրադէտ տիրա-  
ցու կայ այս գիւղում) շատ գեղեցիկ և գրա-  
ւիչ եղանակներով կատարում էին ժամերգու-  
թիւնը: Ժողովուրդը մեծ բաւականութեամբ  
սպասում էր մինչև պատարագի վերջը, միայն  
կանայք իրանց բնական շատախոսութեամբ  
միշտ խանդարում էին, թէ և մի քանի ան-  
գամ ծխատէր քահանայ մարդ ուղարկեց, որ  
մեղմանեն խօսակցութիւնը, բայց հնար չե-  
ղաւ:—Նոթածիքների վրա ես շատ պարզ  
նկատեցի երկու խոշոր պակասութիւն.  
նորա բաժանված լինելով երկու միմեանց  
հակառակ կուսակցութեան, եկեղեցում ամեն  
մէկը աշխատում էր բոլոր ուժով բարձր գո-  
ւալով ամաչանել իր հակառակորդին: Մի  
անգամ նոթածի Սարգիսը վերելից այնպէս  
գոռաց «Տէր ողորմեան», որ ներքին նոթածի-  
քը մնացին իսպառ. պապանձված. ծիծաղն  
ընկաւ ժողովուրդի մէջ, ամեն կողմից փափո-  
ւում էին արձարմ տիրացու Սարգիս, նոթէն  
քիզի հայտն է...: Եւ եթէ նոթածի Մկոն

Պ. Լիանոսեանցի պատասխանը № 56 կարգա-  
ցի, որ սուրբ Երուսաղէմի հասանելի գումարը  
յանձնել է քաղաքային դեպուտատ Վ. Ս.  
(Հաննէսեանցին. պարունը ինձ մղադրում է  
հաւատացնելով որ ես անշուշտ պէտք է իմա-  
նայի այդ բոլոր տեղեկութիւնը, ես բոլոր-  
վին համաձայն եմ նրա հետ, կիմանայի և ըն-  
դունակ եմ իմանալու, եթէ յանձնելը պատահած  
չը լինէր մի տան անկիւնում և որտեղ գործող-  
ները խիստ խոստովանք պահած չը լինէին: Եւս  
կամք չեմ ունեցել Լիանոսեանցի պատուին  
գիպել, իմ նպատակ գործին ծառայելն է ե-  
ղել. իսկ եթէ նա իրեն վերաւորված է հա-  
մարում, եւ հրապարակաւ ներողութիւն եմ խըն-  
դում: Բայց ինչ է մտածում պ. (Հաննէսե-  
սեանցը, յունվար ամիսից մինչև այժմ ինչ է  
պահում գրամը իր մօտ. ինչ է հասցնում  
ըստ պատկանելոյն: Մի բան ինձ շատ է զար-  
մացնում, թէ՛ ինչպէս մեկնել եւ չը գիտեմ,  
մինչդեռ երկար ժամանակ Լիանոսեանցի  
վարութիւնը աշխատում է այդ գումարը ստա-  
նալ սուրբ Երուսաղէմի հասցնելու համար, չէ  
աշողվում, այժմ նրա ներկայացուցչի (յաջոր-  
դի) ներկայութեամբ յանձնվում է մի մասնաւո-  
րի, որը իր վաւերացնելով նրա ստորագրու-  
թիւնը աւելի քան երեք ամիս բոլորովին լու-  
թեան է տուել: Ինչպէս հաստատ աղբւրից  
տեղեկացայ պ. (Հաննէսեանցը գիտե ևս այդ  
գումարը չէ հասցրել հոգեւոր իշխանութեանը:  
Վը ցանկայինք պարունից իմանալ ինչ է կամե-  
նում անել այդ գումարի հետ, և երբ է ներ-  
կայացնելու հոգեւոր իշխանութեանը և թէ՛ վեր-  
ջինս ինչ կարգադրութիւն կանէ Լիանոսեանցի  
նամակը կարգաւորց յետոյ: Եւս ուրախ  
եմ, որ Լիանոսեանցը իրեն պատասխանով  
բարոյապէս հարկադրեց ինձ հրապարակաւ  
ներողութիւն խնդրել, կրկնապատիկ ուրախ  
կը լինէի եթէ պ. պ. երեցփոխանները ևս պա-  
րօնի օրինակին հետեւէին:

Մորենը սարսափ է ձգել մեր գանձակցի-

էլ հոգին բերանը առած, արիւն քրտինք  
մտած ամպի նման չը գոռար, այն ժամանակ  
բոլոր յաղթութիւնը նոթածի Սարգիս կողմն  
էր և նորան մի բողկէ մեղալ անշուշտ  
հարկաւոր էր: Պ. պ. նոթածիքներից մի  
քանիսը միայն այն ժամանակ շապիկ կը  
հագնէին և եկեղեցում կերգէին, երբոր գիւ-  
ղում քիչէին ծաշ կը լինէր:—Աւագ ուրբաթ  
մեզ հրաւիրեցին եկեղեցում ծաշ ուտելու,  
որովհետեւ ամեն տարի այդ օրը, համարեա  
ամեն տանից հաց և կերակուրներ է զալիս  
եկեղեցին իրանց հին և նոր ննջեցեալների  
բաժին: Եկեղեցում նստոտած քահանաները,  
տիրացուները, երկխանները և հասարակու-  
թիւնից ցանկացողները, վայելում են «մեռե-  
լածաշը» և աւելորդը տալիս ժամկոչին:—  
Աւագ շաբաթ օրը գիւղացիք ըստ իրանց  
վարձով սովորութեան մի լաւ պարարտ եղ  
առան «ախառ» (զոհ) անելու համար: Այդ  
օրը երեկոյին ժամի դրանը մի սարսափելի  
աղմուկ բարձրացաւ. մի քանիսը ուղւում էին,  
որ գիշերը շատ շուտով «ախառի» եզը  
մորթեն, ջարդեն որ կիրակի առաւօտը պա-  
տարագին պատրաստ լինի. միւսները կակա-  
ծելով ախառը մորթողներին վրա, թէ գիշերը  
մին մեծ մասը կը խորովեն, կուտեն և իրանց  
աները կուղարկեն, պնդում էին թէ, պէտք է  
անպատճառ լաւ պարզ լուսանայ, յետոյ մոր-  
թեն, որ ամեն մարդ էլ տեսնի թէ ինչ է  
լինում: Վէճը այնպէս տաքացաւ, որ եթէ մի  
քանի բարեմիտ մարդիկ չը միջամտէին, քիչ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՈԹԻՒԿ ՀԱՆԱՊԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Սկսեալ աւագ երեքշաբթի օրից մինչև  
զատիկ կիրակին եւ Դահալի գիւղումն էի,  
իջևանած իմ ծանօթի տանը: Հինգշաբթի  
ծաշից յետոյ յիշեալ գիւղի հասարակու-  
թիւնը հաւաքված էր եկեղեցու մօտ և նո-  
րանց մէջ կանգնած մի բարձրահասակ քա-  
հանայ, արծաթադուլի գաւազանը ձեռքին  
բացատրում էր դպրոցների բարձր նշանակու-  
թիւնը: Քարոզիչ հայրը Խիւսարաբիկայի  
տէր Յովհաննէս ա. քահանայն էր, որ մի և  
նոյն ժամանակ այս գիւղի ծխական դպրոցի  
հոգաբարձու է: Տէր հայրը իր քարոզի մէջ  
հասկացրեց ժողովուրդին, որ տեղական դպրո-  
ցը՝ շատ հին և անյարմար լինելով, պատի-  
ւելիք իրանց, պէտք է ժամանակի պա-  
հանջման համաձայն մի նոր դպրոց շինել  
եկեղեցու մօտ: Տէր հօր այս եղբակցութիւնը



ների սիրտը. 70-ամեայ ծերունիներն անգամ ասում են որ այսպիսի սաստկութեամբ մորեկն չեն տեսած: Թողնենք դրանց եկած լուրերը, խոսենք քաղաքի վերաբերմամբ: Քանի որ դաշտ մանր էր, մեր քաղաքային ոստիկանութիւնը շատ թոյլ վարուեց, կարելի է համարձակ ասել, որ բոլորովին անտարբեր գտնվեցաւ: Ահա ինչպէս ամսին 8-ին ձիարշաւ կար քաղաքից ներքեւ մօտ 3 վերստ հեռավորութեամբ, այն օրը թէ ոստիկանութիւնը և թէ ժողովրդականը տեսան որ մորեկը շատ սաստիկ տարածված է դաշտումը և թողեցին առանց ուշադրութեան: Մորեկը փոքր ինչ մեծանալով մտաւ քաղաքի մէջ, այգիներում ոչ խոտ մնաց և ոչ առնչ, խաղալիք ուրիշ անգամ անխնայ ունեւորում են, աւելի ևս խաղալիք (լինելի) անուանված որթը: Մտան բագերը և լքեցինք աները, փողոցներում անկարելի է լինում ոտով մանքալը, իսկոյն թափվում են մարդու վրա: Քաղաքում այսպէս տարածվելուց յետոյ ամսին 21-ին ոստիկանութեան կարգադրութեամբ փակեցին բոլոր կրպակները որ գնան մորեկ կոտորեն: Երբեք չէր համարում կոտորելը, մանաւանդ քանի որ ոստիկանութեան հրամանը չէր կար: Ոստիկանութիւնը տեսնելով որ այն միջոցն է թոյլ է կարգադրեց, որ իւրաքանչիւր տուն ներկայացնէ նորան 2 պոռթ մորեկ: Հոստալի է, որ այսպիսով փոքր ինչ թիւը նուազվի, այժմ քաղաքի բոլոր գետակներում լքեցված է ահագին սաստկութեամբ մորեկ, այնպէս որ շատ երկիւղելի է այդ խանութ: Այս գետակ մեկ քանի տներ, որ ամբողջ շարքով չեն կարողացել ոչ կերակուր եփել և ոչ հաց թելել, որովհետեւ թանիրը և տունը լցված է եղել մորեկով, իսկ շատերն էլ փոխանակ կոտորելու փլաւ են եփում: առաջն ածում, խունկ ծխում և մոմ վառում: առաջինը, որ վերադառնան: Հոգեւորական դասն էլ այդ լստաւածանից առած մի պատիժ համարելով (ինչպէս իգիտոսում) ժողովրդականաց խորհրդի համաձայն ամբողջ շարքով և գիշերները հանգում է անուճ և ամսին 20-ին տեղին յաջորդ վարդապետը մի քահանայով և աշխարհականով գնաց Ղարաշենա գիւղը (Ղարաշենի վիճակը), բերեց սուրբ ֆափովայ մասնաւոր, երկու օր է եկեղեցական հանգստով քաղաքի եկեղեցիները պատասխանելով ամեն տեղ թափող է անուճ, իսկ միւս կողմից մեկ քանի պարոններ աղքատաց անուճով ողորմութիւն և մատաղաքին են ժողովում: Ետում են գումարը հասնում է մօտ 300 ռուբլու: Ինչպե՜ղով անցնում են փողոցներում պատահում են

մնաց ակառի եղան տեղ երեցիփոխին մորթէին: Լուսացաւ, ախտուր մորթեցին և պատարաւ գից յետոյ բաժանեցին տները: Վիրակի ձաշից յետոյ ինձ հրաւիրեցին Բայանտուր իմ բարեկամը որդու ուրախութեան հանդիսին մասնակից լինելու: Այստեղ հրաւիրած էին Ալեքսանդրապոլից մի քանի պատուաւոր պարոններ և գիւղի նշանաւոր իշխանները: Հանդէսը շատ հետաքրքիր էր: Առաջին պատուաւոր տեղը բազմել էր աշխարհից բէխաբար Խաչիք քեօվկէն, որ թէ հասկացողութեամբ և թէ քաղաքակրթութեամբ մի քանի արշին էլ ցածր էր Դահարլի քեօվկէ: Գինի երէք չէր կար, իսկ օղիի հետ վարժում էին բոլորովին գետի ջրի պէս: Հետեւեալ առաւօտը մեծ բազմութեամբ և մի քանի քաջ ձիաւորներով դուրս եկանք Բայանտուրից և գնում ենք դէպ Ղարաշ, որտեղ նշանված է իմ բարեկամի որդին: Թէ գնալիս, թէ գալիս ծանապարհին պատահողներին, և թէ ծանապարհի վրա արտ վարողներին առանց օղի խմացնելու ոչ որի բաց չէին թողնում: Ճաշից յետոյ ժամը 4-ին մտանք մեծ հանդիսով Ղարաշ, վեր եկանք խնամունց դրանք, որոնք սիրով և համակրութեամբ մեզ ընդունեցին ակառի սենեակը, որը ոչ մի բանով բաժանված չէր ակառից: Միւս օրը խնամին հրաւիրեց իր մերձաւոր բարեկամներին և գիւղի նշանաւոր իշխաններին: Հանդէսը բացվեցաւ, օղիի շիշերը սուսջ եկան, աշուղները բերան

սպանված և այրված մորեկների կոյտին, իսկ նրանց հոտը մարդու ուղեղ է գրվում և եթէ այս մասին թէ ժողովուրդը և թէ ոստիկանութիւնը չուտով հարկաւոր խնամ կարգադրութիւններ չանեն, համարձակ կարելի է ասել որ (այստեղից) անփախչելի է որ և իցէ տարափոխիկ հիւանդութիւն:

Սուրբ Հովհաննէս մայր եկեղեցու ժողովուրդականը անցեալ շաբաթները ժողովելով նոյն եկեղեցու գաւիթը խորհուրդ յետոյ վճռում են, հոգեւոր ուսումնարանները, յաջորդաբար և կրթականներ չենել սուրբ Հովհաննէս մայր եկեղեցու պարտիզումը, այստեղ թէ և վերի թաղի երեխայոց համար փոքր ինչ հեռու կը լինի, բայց ի նկատի ունեւորով որ պրօգրէմագիտից աւելի հեռի է քան այստեղ, և այնտեղ առանց նեղանալու գնում են, նրանք ևս համակրելով իմ կարծիքին լաւ համարեցին եկեղեցու մօտի պարտիզումը շինել, քան գնալ նոր հող գնել և եղած գումարն էլ այնտեղ ծախսել: Եւ այս իսկ նպատակով կազմվել է ընտրութեան թերթ, ընտրվել են երեք պարոններ, որ նրանք երեցիփոխանի հետ միասին գլուխ բերեն այդ շինութիւնները: Սեն բարութիւն արած կը լինեն դրանք եթէ աշխատեն շուտ շինել տալ: անցեալ տարվանից մէկ քանի օրերովներ, որոնք տեղի նեղութեան պատճառով չընդունվեցան, գոնէ այս տարի չեն զբկվի:

Ս.

ՆԱՄԱԿ ԱՍՈՒԼԱԿԱՆՈՒԹԻՅՈՒՆ

25 ապրիլի

Մեր քաղաքացիք վերջին օրերումս զբաղված են ճարտարագետի (архитекторъ) մասին խնդրի տալով:

Երևութիւնները սկսելու ամենալաւ միջոցը լիաբաւարում հիմն է, որովհետեւ շուտ հասնող ցրտերը արգելում են յետաձգել դրանց սկսելը: Լիալցեալում մնացող ճարտարագետը որ լիաբաւարքի բաժնի վրա ևս նշանակված է, մինչ ցայժմ այնքիւ չէ մեր քաղաքը:

Բայց մեր քաղաքացիք մոռանում են մի աւելի կենսական խնդիր, այն է քաղաքային բժշկի մասին հոգ չեն տանում:

Թէ և մերքե անցեց ինք գաւառական բժիշկ, բայց նա մի քանի ամիս է որ արձակուրդ է առնել առ ժամանակեայ, որի վերադառնալը կասկածելի է:

Պէտք է աւելացնան որ պ. բժիշկը իր վար

ները բաց արին զքու օղլու, ու քեշիւ օղլու պոչէն բռնեցին, երգել սկսեցին, քաղաքացի պարոններն էլ հայերէն երգելով սրա նորա բաժակը զարդարեցին: Զէ, հանդէսը տաքացաւ: Դարակցիք բայանտուրոց դէմու գէմն էին նստել ու զանազան ակնարկութիւններով վերադարձում էին օտար հիւրերին: Այս ժամից յետոյ տիրեց մեր հանդիսին կատարեալ ինքնազննութիւն, ամեն մարդ իրա համար պարում և աղաւալային ձայնով երգում, տաւարն էլ ակտիւ էր ձայնակցում և պակասը լրացնում: Ել ինչ երկարացնում, օղլի առատ զործածութիւնը շատերին տեսն ու տեղը քնացրեց, շատերին ծարստար լեզու պարզեց, շատերին քայլամորթ դուրս փախցրեց, շատերին էլ պապանձացրեց ու մուշկ կացրեց: Իսկ այդ գիւղի Սուրբաթ քեօվկէն դեռ չէր կշտացել «արաղ եմ ուզում, արաղ անգալար բըղաւում էր խեղճը: Քեօվկէն թէ յի բաժակով մի օղլի էլ կոնծեց, հիւնք բոպկից յետոյ խելքը խալատ կորցրեց, պատէ պատ յիւզ չելով, գետնները համբուրելով դուրս եկաւ ու փափուկ պատի վրա երկար փովեց ու բարձր ձայնով բղաւեց. «Նս էլ արաղ չեմ ուզում, ինձ համար ում գտեք, ում, թէ չէ ձեր հէրը...»: Քեօվկէն շատ նեղ տեղը կապեց, հով չէր ծարվում: Ով գիտէ ինչով օղլին կարմիր ներկեցին, քեօվկի բերանը ածեցին, որպէս մրցեղէն, աթարը փռեցին, գրպանը ածեցին, և փափուկ դարմանից պա

մունքով հիւանդների հետ գրաւած չէր հասարակութեան համակրութիւնը:

Հասարակութիւնը օգուտ է քաղել և առայժմ էլ քաղում է քաղաքում բնակվող զօրաց կամ հիւանդանոցի բժիշկներից, օրոնց մի քանիսի կամայականութեամբ զոհ էին դարձած մեր քաղաքացիք (դրանցից մինը մինչ 25 թուրք այցելագին էր առնում):

Սրանից մի քանի օր առաջ այստեղից Թիֆլիս ուղևորվեց 71-րդ հիւանդանոցի բժիշկ պ. Գ. Գ. Տէր-Ղարաբաբեցը, որը ոչ միայն չքաւոր հիւանդներից ոչինչ չէր առնում, այլ քաղաքի մօտակայ գիւղերից մինի երեխանց դասական առարկաները ինքն էր գնում, ընծաւում նրանց և հսկում նրանց վրա: Մեր քաղաքը մի մեծ գիւտ արած կը լինէր եթէ քաղաքային բժշկի պաշտօնով հրաւիրէր յիշեալ պարոնին:

Ինչի մեր քաղաքացին չէ հոգում քաղաքային բժիշկ ունենալու: Որովհետեւ նա ի բնէ անհոգ և փողոտէ է, այսօր նա 5—10 ռուբլ չէ ուզում վճարել, իսկ վաղը հիւանդութիւն պատահելիս տանաւոր բուքլիներ աւելի փող է վճարում և այն ևս ով գիտէ ինչ տեսակ բրժշկի հարկադրված կը լինեն հրաւիրել: Սա մի այնպիսի հանգամանք է, որի վրա արժէ մտածել մեր հասարակութեանը:

\*\*\*

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՈՒՆ

Կօօջերկանի, 23 ապրիլի

Ընցեալ փետրվար ամսին, քանի որ ես Թիֆլիսումն էի, կամեում էի յանձնել ձեզ իմ լուսնի յօդուտ «Երաբառան ընկերութեան», բայց մտաբերելով որ շուտով դարձեալ վերադառնալու եմ, Կօօջերկանի քաղաքը, որտեղ կան մօտ 35 տուն հայ բնակիչներ և որոնք պարագում են վաճառականութեամբ, ես գիտութեամբ իսկոյն չը կատարեցի ցանկութիւնս: Ես բոլորովին հաւատացած էի, որ եթէ առաւարկող լինի, Կօօջերկանի հայերը անկապած սիրով կը մասնակցեն յօդուտ «Երաբառան» ընկերութեան նուիրատուութեան գործին: Եւս կարծիքս արգասացաւ: Միեւն պատիւ պ. Լաւրապետ Կուրչեւսկիանց ինքն ստորագրելով, ընդ նմին մեծ սիրով և եռանդով համաձայնեց ինձ հետ խանութե խանութ շրջել մի գումար ժողովելու յիշեալ նպատակի համար: Մի հայ միայն, պ. Բ... հրաժարեց

պիրսկ շինեցին քեօվկէն «Ժափաղայ» արին ու հեռացան: Ա՜մ ինչ տես, բոլորն էլ հարբած, խօսք չեն հասկանում ու բարձր բղաւում ձկնեցին Կարալեյից, որ այսպիսի արթութուն ու արժանաւոր քեօվկայ ունեն: Չորեքշաբթի առաւօտեան ժամը 9-ին դուրս եկանք Կարալեյի և վերադառնում ենք Բայանտուր:

Այս ժամ ծանապարհօրեղեց գինի, ես երկու ձիաւոր հետս վերցրած, բաժանվեցի բազմութիւնից և մտայ ծանապարհի վրա գտնվող Մեծ Պարնի գիւղը, որ բաղկացած է 200 տանից աւելի: Այս գիւղացիք ունէին մի փառաւոր եկեղեցի և մի գետնափոր դրօշ, որ իր ներքին և արտաքին դրութեամբ շատ և շատ ստոր էր գիւղի ակոսներից և որին «գալրոց» անելը կատարեալ անսովորութիւն է:

Ժամը 9-ին մտանք գալրոցը, որի երեք պատերն տակ գրված էին ամենալայն տրաւարաններ և նոցա վրա շարված էին 7 տարեկանից սկսեալ մինչև 20 տարեկան 60-ի չափ աշակերտներ և սովորում էին Արայկանցի, Տէր-Յակովլեւսկի, Տէր-Աւետիսեանցի դասադրերը: Մի քանիսն էլ նոյնան քերականութիւն էին սովորում: Իւրաքանչիւր աշակերտի զինավերել պատից քաշ էր արած նորա ոչխարի մորթուց կարած ահագին փափախը: Հարսուլային լուսամտներին դոգում վարժակտի ցանած զարին բաւական կանաչէ և

ստորագրելով անելով «այդ դասարկ բան մնէ»: Հաւաքին այն էր, որ այս անգից: պատասխանը մեր երեսին խփեց, երբ ես քաղաքից ընկերութեան նպատակը, և այն էլ մի հարուստ խանութում, ուր հէնց առաջի անգամ մենք մտանք... Ինչ և իցէ, ուղարկելով ձեզ պ. խրմբադի, յօդուտ «Երաբառան» ընկերութեան քառասուն և ութ (48) ռուբլ, խնդրեմ բարեհաճէք «Սշակի» մէջ տպել նուիրատուների ազգանունները: Եւս է՝ Ս. Տէր-Ղարաբաբեց, 10 ռուբլ 55 կօպէկ, Կ. Կուրչեւսկիանց 3 ռ., Կ. Կ. Չէնսով 5 ռ., Դ. Լ. Թարանց Ս. Պետրոսեանց և Կ. Կալաշեանց իւրաքանչիւր 3 ռ., Կ. Ս. Դարուկեանց, Պ. Ս. Թասչեանց, Ս. Գրիգորեանց, Ս. Չորչոփեանց և Ս. Լաւաւաճատուրեանց իւրաքանչիւր 2 ռ., Կ. Ս. Չորչոփեանց, Ս. Փեշեքերեանց, Լ. Չափրաստեանց, Խ. Չալախեան, Կ. Կաղիգեանց, Ս. Կիլիգեանց, Ե. Կուրչեւսկի և Ս. Լեյդաղարեանց իւրաքանչիւր 1 ռ., Ս. Թառուսեան, Ս. Թառուսեանց, Լ. Սարգսեանց և Կ. Կերիսեան իւրաքանչիւր 50 կ., Կ. Ս. Կուրչեւսկի 30 կ., Կ. Կարալեւսկի 15 կ.:

Կերեցէ երկու խօսք ևս անել: Կուրչեւսկի քեօվկէն յօդուտ «Երաբառան» ընկերութեան պատեղ առաւել աղօղ լինէր, եթէ Կօօջերկանի ստացվելիս լինէին հայերէն լրագիրներ: Բայց այստեղ ստացվում է կարծեմ միայն «Սշակը», այն էլ մի օրինակ միայն: Եւս ինչ այնտեղ հայերից շատերը կարծեմ կարող են կարգաւ հայերէն լրագիրներ: Կօօջերկանի կան մի երկու հարուստ հայեր, որոնք խանութներ չունեն, ուստի, անձամբ ծանօթ չը լինելով, այնքանոր դառնեցինք գնալ նրանց մօտ: Բայց ստորագրութեան թերթը մնում է պ. Կուրչեւսկիանցի խանութում: Կայս կայ, որ դարձեալ ստորագրողներ կը լինեն:

Ընդունեցէ իմ յարգանքը:

Ս. Տէր-Ղարաբաբեց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են Մեծ ԱՍՈՒԼԱԿԱՆՈՒԹԻՅՈՒՆ, որ վերջին ժամանակները այնտեղի ուսումնարանի դասաւարտութեան կարգը փոխված է: Առաւելներից մէկը, որ արքունական ծառայութեան միջ է, պարսպում է աշակերտների հետ տուտ օտտան 5 ժամից մինչև 7 ժամը և յետոյ գնում է իր դործին:

մի առանձին շքեղութիւն էր տալիս դպրոցին: Այս լուսամտների մէկի առաջ վարժակտի տախտն էր կապած, միւսի մօտ նորա զարմանալի զրատեղանք դրած: Արեւի լինան պատից քաշ էր արած մի թիակաձև տախտակ, որի մէկ երեսի վրա խոշոր տառերով գրված էր.

«Հրաման է դուրս գնալ, շուտով ետ դառնալ»: Միւս երեսում

«Մարդ կայ մի գնար, ծեծ կայ չարաչար»

«Կարժապետ Աղէքսանդր Միրզեանց Աղլըջի»

Արեւմտեան պատից քաշարած դասացուցակից հասկացանք, որ վարժակտը դաս է տալիս. «հիշողութիւն, լեզու, կրօնաստեղծութիւն, թուաբանութիւն, վայելչագրութիւն, երգեցողութիւն և յետ երեկոյեան ժամերը գրութեան պարտ է աշակերտաց հաւաքեցուցը դպրոցս կատարելով գիւկեցի»:

Դասացուցակի տակը մի առանձին թղթի վրա գրած էր դպրոցի կանոնադրութիւնը իր առեսերէն թարգմանութեամբ, որը վարժապետից ներդրութիւն խնդրելով, հետս վերադառնալով, որը վարժակտի առաւելագիտութեան վերաբերութեամբ մի գաղափար տալու ընթացողին բոլորովին նոյնութեամբ, առանց ամենեւին մի տառ աւելացնելու և պակասացնելու արտագրում եմ այստեղ.



Մեզ հաղորդում են ԱՌԱՒԱՒԱՔԻՑ, որ այնտեղ օրերումս երկու մարդ հասնաւ անհայտ միմեանց վրայ քարեր են նետել: Քարը զինչո՞ւմ է մարդկեանցից մէկին, որ երկուսն էլ մեռնում էին: Հանգուցեալը խնդրել է չը պատժել իր հակառակորդին:

Մեզ գրում են ԱՌԱՒԱՒԱՔԻՑ, որ մօտակայ գիւղերի քահանաներից մէկը նշխարով լցնում է խուրճիկը և յանձնում է ծառայելն, որը նշխարները փոխում է ձուի, ցորենի և հաւի հետ:

ԹԵԼԱԻՑ մեզ գրում են. «Այստեղ սաստիկ երաշտով լին է: Ամեն բան թանգ է ծախվում: Ցաւարի մէկ շունարար արժէ 12 կ.: Երկու շարժ արանից առաջ քաղաքի կենտրոնում աւազակները սպանեցին մի հաստակ և միւսին ծանր վերաւորեցին: Աստիկանութիւնը դեռ չէ գտել շարագործները հետքերը»:

Խնդրում ենք ներկայ և անցեալ տարիներին Վշակին այն բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել տարեկան բաժանորդագինը, հասցնել իրանց վճարը խմբագրութեանը:

Վնդանիների հովանաւորութեան ԹԻՖԼԻՍԻ ընկերութիւնը խնդրում է իր անդամներին ներկայ գտնել ընկերութեան ընդհանուր ժողովի տարեկան նիստին, որ լինելու է մայիսի 4-ին երեկոյան 8 ժամին: Նիստը լինելու է գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ Բարխատինսկայա փողոցում, Ալեքսանդրեան պողոտայի Նիստի ժամանակ կը կարգադրէ ընկերութեան հաշիւը: Վարդը են ներկայ գտնել և այն մասնաւոր անձինք, որոնք կենդանիների հովանաւորութեան գործով հետաքրքրուում են:

ԱՌԱՒԱՒԱՔԻՑ մեզ գրում են. «Այստեղ ինչպէս և մեր բոլոր Կարնոյ գաղթականների մէջ, սովորութիւն է դարձած յաճախական երեւոյցն ա. Վեդդի տօնը կատարած օրը տօն պահել: Կարելի է ասել որ այդ տօնը ամենախիստ զգուշութեամբ պահուում են: Այդ տօնին ժողովուրդը «Մօստօն» անուն է տալիս այն պատճառով որ, որպէս թէ իւրաքանչիւր մարդ որ տօն չը պահէ այդ օրը կը պատուհասուի: Այդ մասին Ժողովուրդի մէջ պատմում են զանազան տեսակ առասպելներ, օրինակ մի կին երկնայ է ծնել երկու գլուխների կամ երեք ոտք ունեցող է այլն հրէական:

«Ա. Ե. Ր. Ն. Ե. Թ. Ի. Ե. Ն.»

«Պատուէր նկատողաց ուսումնարանս մեծ Պարնի դպ. հայոց»  
«Ա. Առանց ինչ պատճառի (բացի աղքատեր պարտնորոց) արգելք է տալու դպ. ուսումնարանս»

«Բ. Գալով որ և իցէ անձինքները հարկաւ պատրաստուինայ այսինքն ձեռքերը կոր, վեր առած գլխարկը և մերկանած իւր ցրտապահ վերարկուներէն, այսինքն ետփռեցինք իրար մօտեր և կէտ սոցա նման այլ ինչ բաները»:

«Գ. Հո՛ւմի իրաւունք անանց ուսուցչի հըրամանին քնալ դէպք աշակերտներս»

«Դ. Եւ ո՞վ որ այս կանոններուց թացակայ գտնուի իւրաքանչիւրը հարկաւ վճարելոց է 1 մանկէ տուգանք օգուտ և ի յատկաւարակութիւն նոյն հոգաբարձութեան դպ. հայ. ծխ. մեծ պարնի»:

Առաւել. Ա. Միրզայանց

- Заповедь приходству въ школѣ.
1. Безъ чинѣй ни пускаеть лѣзять въ школѣ
  2. Проходящимъ кто ни буть людѣй бытъ ли имѣтъ готова (то есть) руками подъ внизу снимать шпилькой и бурки политонѣй или таковыя вещи.
  3. Ни можеть безъ приказани учителю едять на ученика
  4. Котори кто сѣя положена или взысканѣя далечить онѣ долженѣ заплатитъ

Հանձնն կենդանի, մարդիկ մտածում են թէ ինչիցն է պատահել: Կա: Վերջ 'ի վերջոյ նորա այն կարակացութեանն են դալիս, որ երկնայի մայրը չէ յարգել այդ օրը և դրա համար սբ. Վեդդը նրան պատժել է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՍՏԻՒԱ

Մինչդեռ եւրօպական միւս պետութիւնները արեւելեան վերջին պատերազմի ծանր տպաւորութեան ներքոյ, պարապած են իւրանց երկրներին ներքին բարեկարգութիւններով, միւս կողմից Աւստրիան զոյնզոյն դրօշակներով, երաժշտութիւններով, ճրագալոյցներով ու հազար ու մի ուրախութեան ցուցմունքներով մեծաշուք հանդիսով սօնում է իր միահիման արծաթեայ հարսանիքը (noces d'argent) այսինքն նրա ամուսնութեան քսանհինգերորդ տարեդարձը:

Ամբողջ Աւստրիան սոնախմբութեան մէջ է. հանդէսը սոնում է երեք ամբողջ օր. օտարները հեազհեա եւրօպական են դէպի աւստրիական գլխաւոր քաղաքները: Երեք օր շարունակ կայրը ընդունելութիւններ էր անում: զինուորական, քաղաքական, հոգեւորական և զանազան կարգերի առաջնաւորներ, ու ներկայացուցիչներ անդադար այցելութիւններ էին անում կայսրին ու կայսրուհուն: Արծաթեայ հարսանիքի հանդիսին ներկայ էին կայսերական ընտանիքի բոլոր մօտ թէ հեռու ազգականները. բոլոր այդ հանդիսի տեղութեան միջոցին, Վիեննան նորահարութեամբ կերպարանք էր ընդունել. նրա լայնարձակ փողոցները ամբողջ խառնութեանց անանցանելի էին դարձել: այդ միջոցին այդտեղ ժողովված էին ամբողջ պետութեան բոլոր նշանաւոր ներկայացուցիչները: Կարդինալ Վուչէրը մայր եկեղեցում կէսօրին մի հանդիսաւոր պատարագ տրւաւ: Պատարագին ներկայ գտնվեցան նրանց մեծութիւնները կայսրը, կայսրուհին և թագաւանագ իշխանը: Ժողովուրդը նրանց ընդունեց և ճանապարհ ձգեց բարձրաձայն կեցցէներով:

1-го рубля прибыть въ училищу тоже онѣ смотрителству:

Переводиль А. Мирзоянцъ.

Այս կանոնադրութեան գ. յօդուածի զօրութեան համաձայն եւ հրաման առայ վարժապետից, մօտեցայ աշակերտներին և սկսեցի ըննութիւնը ռուսերէնից, բայց տարաբար դարար ռուսերէն միայն մի աշակերտ էր սովորում, այն էլ մի բաղդից, չը գիտեմ տկար էր, ինչ էր, ոչ կարգով կարգում էր և ոչ կարգացածը հասկանում էր: Սկսեցինք հայերէնը. Աղայեանցի «Մայրենի լեզուի» վրա կարդում էին բոլորովին այնպէս, ինչպէս կապիով կարգում են փոքր աղբորը: Աւելի առաջադեմները կարգում էին բոլորովին անբնական, չափազանց զանգաղ և մի ծիծաղելի եղանակով: Կարգացածից ոչինչ չէին հասկանում: Վերջ բան է առաստաղը, հարցնում են մի առաջադեմ աշակերտի. խեղճը գրասեղանը ցոյց տուեց, իսկ վարժապետը ոտով ծածուկ զննեց, եւ խիտ, որով կամեաւ էր աշակերտներին հասկանել թէ, առատաւոր կը նշանակէ գետին: Կամեաւ էի թուարանութիւն հարցնել վարժապետը ներողութիւն խնդրեց թէ, մի քանի օրից յետոյ պէտք է սկսէ թուարանութիւն: Թէ գրատախտակ, թէ քարտախտակ ամենին չը կար:—Սկսեցինք իրօնը ոչ մէկը մի կարեւոր աղօթք չը գիտէր: վարժապետը մեզ հասկացրեց, որ կրօնից սովորել են սրբազան պատմութիւն հին կտակարանից: Նա լաւ, այժմ հարցնում են վարժապետի ցոյց տուած աշակերտներին:

Այս հանդիսաւոր ամսախմբութեան միջոցին հեռագիրը մի տխուր լուր բերեց. այդ լուրը ինչպէս կայսրին նոյն և բոլոր պալատականներին մեծ ցաւ պատճառեց. Գրեցից հեռագրեցին, որ բարօն Ֆոն Վելլերսպէրգ վախճանվել է:

Հանգուցեալը սահմանադրական ամենանշանաւոր պատգամաւորներից մէկն էր, և երբ նա արդէն կորցրել էր իր քաղաքական ազդեցութիւնը, այնու ամենայնիւ նա դեռ պահում էր վաղ համակրութիւնը, որ ամենքը զգում էին դէպի նրան. նա երբեմն ծրիեստի և Պրազայի նահանգապետութեան պաշտօն էր վարում: բացի այդ նա կայսրի ամենամօտերիմ խորհրդատուներից մէկն էր:

Պատմում են որ նորին մեծութիւնը կայսրը իր արծաթեայ հարսանիքի հանդիսի առիթով բազմաթիւ բանտարկեալների յանցանքները և բանտից արձակել է տուել: ասում են որ թողութիւն ասացածների թուում մօտ 44 հոգի այնպիսի մեղապարտներ էին, որոնք մեղապարտ էին գտնվել թագաւորական ընտանիքի անդամների դէմ գործած յանցանքով: այս պատճառով բազմաթիւ ընտանիքի անդամներ եկել էին իրանց ջերմ շնորհակալութիւնը փհանաւ կայսրին յայտնելու:

Ապրիլի 27-ին Վիեննայի մեծ հրապարակի վրա, ուր ժողովված էին երկրի մեծամեծները, և օտար պետութիւնների բոլոր ներկայացուցիչները, քաղաքապետը ահագին բազմութեան առաջ մի երկար ձառ կարդաց, որի մէջ նա սիրելի կայսրին երկար կեանք էր մաղթում: շնորհակալութիւն էր անում նրա իմաստուն և խոհեմ կառավարութեան մասին: Կայսրը մի կարճ ատենաբանութեամբ շնորհակալութիւն յայտնեց պ. քաղաքապետին և իր շուրջը ժողովված հանդիսականներին, յետոյ երկրին աջողութիւն և բարօրութիւն մաղթելով վերջացրեց հանդէսը: Ժամը արդէն մէկ և կէս էր, երբ հանդէսը բոլորովին վերջացաւ և բոլոր այդ ժամանակը անցաւ առանց ընդհանուր կարգը խառնվելու, և առանց որ և է վտանգաւոր դիպուածի:

Հանդիսի առիթով կոմս Անդրաշի մի շքուայլ խնջոյք տուեց. այդ օրը նրա բնական մի փառաւոր պալատի տեսք էր ընդունել:

Ժապետի ցոյց տուած աշակերտներին: «Ո՞վ էր Աբրահամ. Արաջան ըտեղ չեն հասել.—ընդհատեց վարժապետը:

«Ո՞վ էր Կայէն.—Աղա ջան ըտեղ չեն հասել:

«Ո՞վ էր Աբամ.—Աղա ջան ըտեղ էլ չեն հասել:

«Առաջին օրը ի՞նչ ստեղծեց Աստուած.— երկինք և երկիր.—վտահ պատասխանեց մի 20 տարեկան աշակերտ:—Սկսեցինք քերականութիւնը, որ միայն երեք աշակերտ էին սովորում և «ուժը բանի մասերը վերջացրել են» ասաց վարժապետը:

Վեր առայ մի մատիտ, մի քանոն և մի դասագիրք ու հարցրի. լապս խնցեք, այս առարկաներից որն է զոյնակնը, որն է ածականը և որն է բայը. բոլորն էլ բայ են, պատասխանեց մէկը ոչ, գիրքը բայ է, մնացածները ածական են, հաստատեցին միւսները: Վայելադրութիւնից չը հարցրինք, որովհետեւ տգեղագրութիւն էլ չը գիտէին: Նրո՞ք միայն երկու աշակերտ գիտէին, այն էլ միայն Վեյնիւ ընկերը որով և մեր հարցաքննութիւնը վերջացաւ: Ողջունեցինք աշակերտներին և երբ կամեաւ էինք դուրս գալ դպրոցից, յանկարծ վարժապետը քրո՞ծիծաղ տալով, դուրս հանեց ջերից մի շիշ օղի, ածեց բաժակը և առաջարկեց ինձ հետեւեալ խօսքերով. «Աղա ջան, թողութիւն էրէք, ձեզի գերայ պատիւ չէ, բռնան էրթալ գալ չէր էղի...»: Վեր առանք օղին լիքը բաժակը,

ՄԾԱԿԻ ՃԵՈԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ի.Ա.ԶՈՐ, 27 ապրիլի (9 մայիսի): Նախուրանը ընդունեց հաշտութեան հետեւեալ բանաբանները. նա պէտք է Կանդախարի սահմանը տեղափոխէ մինչև Խօջէի-Ամրամը, որի մէջ կը պարունակվեն Խօջէի անցքը և Պիշինեան հովիտը. նա պէտք է զիջանի Բուրուժի հովիտը մինչև Նատուրգարդինա, և Կայսերեան անցքը մինչև Լաճօր: Մայր Կալանխար Էմիրի հետ միասին Կարուլ կը վերադառնայ: Անգլիային իրաւունք է արկում Կանդախարում, բրիտանական հիւպատոս փոխարէն մի գործակատար ունենայ:

ՄՕՍԿՎԱ, 29 ապրիլի: Մօսկվայի զինեալ նահանգապետը զենքեր կրելու, պահելու կամ վաճառելու վերաբերութեամբ նոյնպիսի օրէնքներ հրատարակեց, ինչպէս և Ս. Պետերբուրգի զինեալ նահանգապետը: Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 ապրիլի: Այսօր Կոլկասի Փոխարքան իր Ամուսնու և Նիկոլայ Միխայիլովի որդու հետ միասին ուղևորվեցան արտասահման:

ԼՕՆԴՈՆ, 30 ապրիլի (12 մայիսի): «Times» լրագիրը հաղորդում է, որ մայր Կալանխար փոխարքայի նամակը յանձնեց Նախուրանին: Նախուրանը ձանաչվում է Ալեքսանդր Նիստանի իրական տէր:

ՇՏՈՒՏԳԱՐԳ, 30 ապրիլի (12 մայիսի): Երէկ կայացաւ Գեօրգի Մակաիմիլիանովիչի և Տերէզա Օրդեհուրդի հարսանիքի հանդէսը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 ապրիլի: Պետական բանկի 50 տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 87 կ., երկրորդ 96 ռ. 37 կ., երրորդ 96 ռ. 5 կ., չորրորդ 96 ռ., ներքին 50 առաջին փոխառութեան տոմսակր արժէ 244 ռ. 50 կ., երկրորդ 238 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 93 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ. 87 կ., ոսկի 8 ռ. 48 կ., Տրամադրութիւնը սաստիկ ամուր է:

ԼԻՎԱՆԻԱ, 1 մայիսի: Երէկ առաւօտեան 10 ժամին իշխան Բատտեմբերգ հասաւ այստեղ:

ՄԻՐԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆ

օրհնեցինք վարժապետի կեանքը, մի քանի բարեմաղթութիւններ արկել և նոյնութեամբ յետ դարձրինք իրան, կրկին ողջունեցինք աշակերտներին և դուրս եկանք դպրոցից, հեծանք ձիանքը ու շտապով հեռացանք:

Արդեօք չէ՞ ամաչում 200 տունից բաղկացած մեծ Պարնի գիւղը որ պալատի ապարդիւն դպրոց է պահում: Չեն ամաչում այդ դպրոցի հոգաբարձուները, որ այդպիսի գիտնալիւր խրճիթի մէջ և այդպիսի վարժապետի ձեռաց տակ 60-ից աւելի անմեղ երեխաներ թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս փչանում են: Ո՞ր են թեմական տեսուչները, ծանօթ են այսպիսի դպրոցների հետ, թէ չարժէ գիւղի դպրոցների վրա ուշադրութիւն դարձնել:

Մի քանի վերստ ձիանքը շատ սուր քշելուց յետոյ հասանք մեր ֆուրգօնին: Ճաշից յետոյ ժամը 4-ին մօտեց Ալեքսանդրապօլ, ամեն մարդկութիւնից և քաղաքավարութիւնից զուրկ քաղաքը. չափաանները իրանց սովորական անկարգութեամբ խրտալցրին ֆուրգօնի ձիանքը, որ փողոցի մէջտեղը շուռ եկաւ և 10-ից աւելի մարդիկ տակը մնացին և հազիւ շատերը մահացան աղաւտեցին. ինչ կարծիք, որ մէկի ոտքը կտրվեց, մէկի ձեռքը, մէկի գլուխը... որն էլ մինչև հիւմայ անկողնում պառկած է:

Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեանց



